ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/1314 «15» 12 2020թ.

Ձեր

ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ ՍՊԸ (ՀՎՀՀ 00195768)
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ,
Գ.Նժդեհի փ.շ 103/26
էլ. հասցե՝ greg,greston@yandex.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և ''Գռեգգռեստոն'' ՍՊԸ-ի միջև 18 մայիսի 2020թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԻՆ/ՏՎ-2020/Ա-37 ծածկագրով շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման ծառայությունների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ''Գռեգգռեստոն'' ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ծառայության մատուցման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ

կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և ''Գոեգգոեստոն'' ՍՊԸ-ի միջև 18,05,2020թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԻՆ/ՏՎ-2020/Ա-37 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

''Գոեգգոեստոն'' ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

''Գոեգգոեստոն'' ՍՊԸ-ն պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո, հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարութիան կողմից բացված գանձապետական 500005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել՝ 3,000,000 ՀՀ դրամ որպես որակավորման ապահովում և 300,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի ապահովում:

Հարգանքով՝
Պետ, ոստիկանության գնդապետ ***Ա.Ներսիսյան***

Կատարող՝ Բ.Փահլևանյան
Հեռ. 50-39